

ՇԻՐԻՆ ՇԱՅ

ԵՒ

ԲԱՅՐ



(Կուլտակի բարբառով) *



վալ ժամանակին Սև սարը Թագաւոր մը
բնակվում էր, ըմէն գախ էն սարը ավ
ու ղուտ (որսորդութեան) էթում էր:

Մէկ օր էլ էն սարիցը ձէն էլաւ.

— Թագաւոր, քու գլօխ պէտք ա
շատ դարձեր (փորձութիւն, արկածք)
գան:

Թագաւորը ասաց.

— Որ դարձ իգայ, եր կը կա-

տարուի:

— Էն օրը կը կատարուի, երբ մօէ աթոռը տակդ, էրկաթէ
ամանը առաջդ ըլլի, ասաց ձէնը:

— Էն դարձն որ իմ գլօխ պէտք ա իգայ, մկն թող գայ, քանի
որ Թեխ ղուվաթ, աչքիս էլ լուս կայ. ասաց Թագաւորը:

*) Նիկողոս Դաւիթեան Սուրմայուի գաւառի Կուլտակ գիւղը ծնած 1848-ին,
Ալիքեան գիւղը մեծացած է մինչեւ 10 տարեկան հասակը. նոյն գիւղի մէջ 90
տարեկան հասակ ունեցող Օվոյի Գրիգորից սովորած էր Շիրին շահի վէպը: Դաւ-
ձեալ Կուլտակ եկած՝ բնակած է 25 տարիէ ի վեր:

Էն գախին թագաւորը քամու նման մի բան վերցրեց տարաւ:
Է՛լ չիմցաւ թագաւորը թէ դժը կերթայ:

Օրերուց մէկը աչքը բացեց, տեսաւ ինքն իրան մէ օտար էր-
կիր ընկած ա, թագաւորական գետտը (զգեստ) իր վրէն ման կգայ:
Իրան վրի գետտը խանեց, տարաւ պախեց:

Թագաւորը գնաց էսդէն, էնդէն, ըսու, ընու զարկուաւ, ըս-
կրոց իրան նօգարութիւն անել: Մի լաւ մարդի ըռաց էկաւ, էն
մարդի աչք շատ բռնեց էդ տղին, շատ սիրեց, իրան որձեղէն տղայ
չունէր, մի աղջիկ ունէր. բերեց իրա աղջիկը առեց էս տղին, արաւ
հոգական որդի:

Մենք դառնանք Սև սարը:

Սև սարի մարդիկը ժողնրվան, խորխուրդ արին, որ իրանց
թագաւորը կուրսեր ա, չկայ, պէտք ա գտնեն, եան իրանց ղուօր
թալեն:

Թագաւորին շատ ման էկան, չգտան:

Ղուօր թալեցին, թռաւ, ման էկաւ-ման էկաւ, էկաւ, իջաւ
թագաւորի քալսի վրէն:

Իրեք հազ ղուօր թալեցին, իրեք գախին էլ գնաց թագաւորի
քալսի վրէն իջաւ:

Ժողնրվան թագաւորի վախին ու նազիրը, թագաւորի լաւ-լաւ
մարդիկը, իրանց-իրանց մատաւհաթ (խորհուրդ) արին.

—Կըլլի որ մեր թագաւորը սաղ ա, գնացեր ա օտար էրկիր.
արէք, իրեք ճամբու մէջ թալենք մեր ղուօր, տենանք, դժը որ է-
թայ, մենք էլ խեանը էթանք:

Բերին ղուօր թալեցին, իրանք էլ ընկան էտեն ու գացին, գա-
ցին շատ քիչ, խասան դէ էն քաղաքը, որ իրանց թագաւորը ըն-
կած էր:

Թագաւորն որ գացեր էր, մէկ տարի քմեր էր. իրան կնիկն էլ
ծանտը ոտ էր, ծնելու օրը մօտկցեր էր:

Թագաւորը, որ էդ օրը ղուօր թալած ին, գացեր ա անոր (անե-
րոջ) արտին ջուր անելու:

Ղուօր էկեր, իջեր ա իրա անոր դռան վրէն:

Սոյն Նիկողոսս սոմնաւար լինելով այլեւայլ գիւղեր Բիչ աս մնացած էր գոր-
ծով, որով Կուլապայ լեզուն կիսաւհեալ չէր կարող խօսիլ:

Շիրին շահի վէպը՝ հին հայկական աւանդութեան բանի կէտերը կը շօշա-
փէ, որով ընթերցողները պիտի հասկանան թէ վէպս հայկական ասացուածի ձեւ
ունի: Թերեւս Ալիջան գիւղն տւելի լաւ պատմողներ լինին:

Վէպիս աւելի ընդարձակ մի ճիւղը գրի առած եմ Մոկաց քաղաքով, որ
ունի նաեւ երգեր: Նոյն վէպի առող Զասիկն կասէ թէ «շախ» կը նշանակէ «բող-
բոջ», վառնգի Դաւթի բողբոջներէն է «Շիրին շախ»:

Կնիկը խաց տարաւ արտ թագաւորին խամար:

—Ա՛յ կնիկ, ինչ էլաւ, ընչի՛ էսքան անգան բերեցիր խացը, ասաց թագաւորը:

—Ա՛յ մարդ, ասաց կնիկը, մեր դուռ ու դուռ ձիաւորներ բռներ են, մեզնից թագաւոր ուզում են:

Թագաւորը խեղ գախուն իմացաւ, որ իրան մարդիկ էկեր են Սև սարից, իրան գտեր են:

Թագաւորի ոտը գետնից կտրաւ ուրախութենից. ասաց իրա կնկանը.

—Կնիկ, շուտ՝ դնա՛ տուն, մեր ձիան մտուրքին մէ պուտուկ հո-
րեր եմ. միայ մաւ, արի, չըլլի բերանը բանաս, ընու մէջ օձ ու ջա-
նալաւ կայ:

Կնիկը վազաւ տունը, առաւ բերեց:

Թագաւորը ուրախութենից խաց ուտել մոռցեր էր, տեղը տիլ էր, նստելու տեղ չկար, կնիկը ասաց.

—Ա՛յ մարդ, արի, չոքերիս վրէն նստիր:

Աման չէր տարեր, բախը դրեց մարդի առջին, զադը (կերա-
կուր) ցեց մէջը, գդալ չկէր, քիֆով (պատառով) կերաւ:

Թագաւորին միտքը էկաւ Սև սարի խօսքը. ասաց.

—Դոհանամ քեզնից, Ա՛ստուած, կատարաւ յետօր Սև սարի բըլ-
բուլի են խօսքը, որ կասէր.—«Երբ մըսէ աթոռը տակդ՝ էրկաթէ
ամանը առէջդ ա». անա կնկանս չոքերին վրէն նստած՝ բախին
մէջ էլ խաց կուտեմ:

Կնկանը ասաց.—Դու վեր կաց, դնա՛:

Կնիկը գնաց. ինքը մտաւ առուն, քամուզ լեղացաւ. իրան
թագաւորական գետը խանց պուտուկից, խագաւ, թագը գլխը
դրեց, ճանրախ ընկաւ դպա տուն:

Ղուօր պատի վրիցը թռաւ, բանձրցաւ էրկինք, էկաւ թըխ
թագաւորը:

Թագաւորի մարդիկ, որ դռի խեղ էկեր էն, էկան թագաւորը
գտան. ընկան ընդու առէջ, ուրախ-ուրախ էկան իրա աների տունը:

Էդ տեղ ուրախութեն արին, դէ լուսը բացուեցաւ:

Էն մէկել օր ձիանքը քաշեցին, հեծցրին թագաւորին:

Թագաւորի կնիկը ծանուր ոտ էր, էդի թողեց.

—Կնիկ, ասաց թագաւորը, մացի էդ տեղ, էս բազպանդը (կա-
խարդական փաթեթ) տալում եմ քեզի, մէջը ակունք կայ. քեզնից
թէ աղայ էլաւ, անուէր կը դնես Բարակ չախ, որ ջոջըցաւ, էս բազ-
պանդը կը կապես թիւ, կըգայ Սև սարը, ընձի կը գտնի. Թէ աղջիկ
էլաւ՝ էդ բազպանդը բաւական ա էրկըսիդ էլ:

Ժամանակը քմաւ, կնիկը պարկաւ, տղայ մի բերեց, անունը դրին Բարակ շախ:

Բարակ շախ վեց տարեկան էլաւ. մէրը տուեց ուսումնարանը, իրա ուսումը լաւ աւաւ:

Մէ օր Բարակ շախ գիրքը դունախին (գրկին) դալմ էր. տեսաւ ճփեր ճան (վէգ) էն խաղում, չուռ-ու-դուռ էրաւ (գետնէն ձեռով մէկ անգամէն սրբելով հաւաքեց), տղէն ճփերը վերցրեց:

Մէկ քնաչալ տղայ կէր էդ ճան խաղողների մէջ. էն քնաչալ տղէն ասեց.

— Բիճ (պուռնկորդի), բճի տղա, իմ ճաները ընչի՞ վերցրիր, թա՛լ գետին:

Բարակ շախ ճաները թալեց, լալելին գնաց, մօրը ասաց.

— Նանէ, իմ խէրը ո՞րն ա:

— Ընչի՞ խամար, սրգի:

— Էսօր էն քնաչալ տղէն ընձի բիճ, ասաց, բճի տղա. ես էլ միտք անում եմ, ես բիճ եմ, որ ընձի բիճ ասում են:

— Չէ, որդի, դու Սև սարի թագաւորի տղէն ես, քու խէր թագաւոր ա:

— Նանէ, որ էդենց ա, ես կեթամ, կը խասնեմ իմ խօր:

Բարակ շախ էլաւ, ձի մը քաշեց, խեծաւ:

Մէրը լացեց, ասաց.

— Ո՛րդի, դու դժժ ես էթում:

— Պտի էթամ Սև սարը, խասնեմ իմ խօրը:

Մէրը տեսաւ, որ օղորթ տղէն էթում ա, բերեց բազպանդը, որ խէրը տուեր էր, կապեց տղի աջ թևի վրէն. տղէն էլ մօրը ձեռը պաչեց:

Մէրն էլ ասաց. — Գնա՛, Աստուած քու բան յաջողայ:

Բարակ շախ գնաց: Օրերից մէկ օր գնաց, խասաւ իր խօրը:

Խէրը խանչեց իրան էրեսը, խարցրեց.

— Դու սրտուց ես:

— Ես Սև սարայ թագաւորի տղէն՝ Բարակ շախն եմ:

— Էրեւմա՛, դու իմ տղէն ես. որ դուն իմ տղէն ես, ընձնից քու կուշտ նշան պտի ըլլի:

Բացեց թևը, նշանց տուեց խօրը բազպանդը:

Խէրը տեսնալուն պէս իմցաւ, որ իրա տղէն էր. սիրեց, ընդու խամար տասւերկու ցօփաւ բռնեց. պախեց իրա մօտ:

Թագաւորը խալիվորցեր էր. օրերուց մէկը խանչեց Բարակ շախին, ասաց.

— Ո՛րդի, ես խալիվորցեր եմ, ըստուց դէն դուն իմ տեղ թա-

գաւոր էդի, Սև սարը լաւ պախի, ըմէն գախ էն տեղ դնա՛ ասլ ու դուռ: Ես որ մեռայ, Սև սարի գլօխ խորէ՛ ընձի:

Բարակ շախը յըմնօր էթըմ էր Սև սարը. էրկու, իրեք, տաս տարի էլաւ, ըսկի սարից չէր կտրէր, հա՛ էթըմ ու գալըմ էր:

Թագաւորը մէ տարի քմաւ, որ խիւանդ էր. որ խիւանդ էր՝ Բարակ շախ մէ տարի Սև սար ասլ ու դուռ չգնաց, մնաց խօր կուշտ, իրա խէր կը պախէր:

Թագաւոր որ մեռաւ, Բարակ շախ էլի գնաց Սև սար, իրա նօֆաւնեքն էլ իրա խեօ:

Դու մ'ասի, Բարակ շախ որ մէ տարի էդ Սև սարը չէր գացեր, Լեկթեմուր էկեր, տրապըտեր էր էդ սարը:

Բարակ շախ իրան նօֆաւնեքի խեօ շատ ման էկաւ, մէ ջիլրան ըռաս էկաւ, նօֆաւնեքի խեօ փաթեցին էդ ջիլրանին:

Բարակ շախ ասաց.—է՛, նօֆաւնեք, էդ ջիլրան վի՛ր առաջից փախնի, էնի մինակ պտի բռնի:

Ջիլրանն էր, էկաւ Բարակ շախի առաջից փախաւ:

Բարակ շախ ընկաւ ջիլրանի էտե ու գնաց, հա՛ էստեղ, հա՛ էնտեղ բռնեմ, ասաց ու շատ խեռուն խասաւ, գանեց:

Բարակ շախի տասուերկու նօֆաւնեքը մացլն էնտեղ կայնուկ:

Լեկթեմուր իրա մարդերով ըռաս էկաւ Բարակ շախի նօֆաւնեքին, թուրը քաշեց, ընկաւ մէջները, տասուերկուսին էլ սըպանեց:

Բարակ շախ ջիլրանը բռնեց, դարձաւ, էկաւ նօֆաւնեքի կուշտ. օ, ինչ տեսայ—տասուերկուսին էլ սըպանած ա:

Ջանդախները չըջեց էս եանը, էն եանը, տեսաւ, որ մէկը տակը մացեր ա, ընդուց ձէն ա ըլլում. դուա խանեց, խարցրեց.

—Ձեզի սըն ա էս խալին (վիճակին) էցգեր, էսենց սըպանէ:

—Չեմ գիտամ, իտա ձիան իզը, որ գութանի պէս էկեր, գետինը վարեր ա, էդ ձիան տէրը մեզի սըմալ (այսպէս) արաց, ասաց ու էն էլ մեռաւ:

Բարակ շախ շատ նեղացաւ, բռնեց ձիան իզը՝ գնաց. գլխովը բաւ Սև սարի կողն ի վիւր, ըռաս էկաւ մէ ֆօօֆ ու սարի, գնաց դուռը կայնաւ. ձիուց իջաւ, կապեց, մտաւ ներս, տեսաւ՝ որ Լեկթեմուր իրա գլօխ դրեր ա իրա կնկայ չոքերի վրէն, քներ ա:

Թուրը քաշեց Բարակ շախ, ասաց՝ էթամ, ընդու վիզը կտրեմ:

Ասաց իրա-իրա.—էդի քնուկ ա, Աստուած դապուլ չանի. էլնի, էն գախ մարսի-մարսանա կը գանեմ ընդու:

Բարակ շախ ուզեց որ նստէր, Լեկթեմուրի աղջիկ ընդեն էր, տեսաւ որ տղէն նստըմ ա, յեղաւ ֆէշէն բերեց, էցգեց, բարձն էլ դրեց, Բարակ շախ նստաւ ու ննջաց, քնաւ:

Լեկթեմուրի կնիկը Լեկթեմուրին խմցրեց:

Լեկթեմուր թուրը քաշեց, որ ըդու վիզը կտրայ:

Աղջիկը էլաւ-կայնաւ, իրա խօր հախից բռնեց, զարային թա-
լեց, որ դնաց ընկաւ պատի վրէն, պատն էլ քանդեց, ընկաւ դուռ:

— Նամասթի տղան, նամա՛րե, ասաց իրա աղջիկը. էնի դռնից
էկաւ՝ քեզի քնուկ տեղ չգտնեց, դու իմալ ես ընդուն զանըմ. եա-
վաւ, էն էլ քու պէս քնի, յեղնի, յելէք դուռը, դու ընդուն արունը
խման, էն էլ քու արունը թըղ խմայ:

Բարակ շախ քնից յիմցաւ. էլան դուռը, մտան մէյսան:

Ասաց Լեկթեմուր. — Բարակ շախ, դու իմ վրէն ես էկել, դու
պարկի, ես քեզի իրեք կիւրգ զանեմ:

Պարկաւ *) Բարակ շախ:

Լեկթեմուր գնաց-էկաւ, իրեք կիւրգ զանեց:

Աստըծու խրամանքով մէկն էլ ընդուն չառաւ:

Ասաց Բարակ շախ. — Նօպաք քոն ա, Լեկթեմուր, արի, պարկի:

Պարկաւ Լեկթեմուր:

Բարակ շախ ասաց. — Նս ընձի կիւրգ չունեմ, իրեք թուր կը
զանեմ քեզի:

էս դեն, էն դեն դարձաւ, էկաւ որ զանէր. Լեկթեմուրի կնիկ
էկաւ առէջ, ասաց.

էս մէկ թուրը բախշան իմ խացին:

— Էս մէ թուրը պախշեցի քու խացին, ասաց Բարակ շախ:

Ելի Բարակ շախ դարձաւ-էկաւ, որ մէ թուր էլ զանէր:

Աղջիկը էկաւ առէջ, ասաց.

— Բարակ շախ, էդ մէկ թուրն էլ պախշան ընձի, իմ խէրն ա:

— Մնաց մէ թուրը, ասաց Բարակ շախ. — էս մէկ թուրը՝ Աս-
տըծոնց մարդ իզայ՝ հնար չկայ, կը զանեմ. ըսիք իլան չկայ, որ
պտի զանեմ:

Լեկթեմուրն էլ յիմցաւ, որ էդ մէ թըրին չդիմանայ. մէկ էլ
աղաչեց:

Որ շատ աղաչեց, խնդրեց, Բարակ շախ ասաց.

— Ավալ յորդում կեր:

Յեկաւ, յորդում կերաւ, ասաց.

— «Խացը զինին, տէր կենդանին», ես քեզի պզտի աղբէր, դու
էլ ընձի ջոջ աղբէր. իմ աղջիկն էլ ես յօժար կամօք տուի քեզի:
Իրեք խեռ յորդում կերաւ:

Որ իրեք խեռ յորդում կերաւ՝ Լեկթեմուր իրա աղջիկը, ֆօւկ

*) Եւկու խաղացողներու մին երբ կը կանգնի եւ միւսը կը խաղայ կամ
կը զարնէ, կանգնողին պ ա ռ կ աւ կանեն:

ու սարի բանլիսներն էլ տուեց Բարակ շախին. օթախներն էլ նշանց տուեց, էկաւ մէ օթախի էլ ըռաս էկան. ասաց Բարակ շախ.

— Ընդու բանլիսն էլ տո՛ւ:

— Աստուած վկայ ա, որ ըսու մէջ զա՛ս (բան) չկայ, ասաց:

— Լեկթեմուր, ասաց Բարակ շախ, արու՛նը քեզի կապեր ա, հա՛ սըպանեցի քեզի, ըսու բանլիսն էլ տո՛ւ:

Վախեցաւ Լեկթեմուր, խանեց, տուեց:

Մտան մէջը, տեսան, որ օղորդ զաս չկէր, յըմա մէ դապաղա թղթի վրէն էրկու շիխ (պատկեր) կէր, տեսնալուն պէս Բարակ շախի խեղճը գնաց, ընկաւ:

Թուրը քաշեց Լեկթեմուր, որ վիզը կտրայ:

Աղջիկը ասաց իրա խօրը.

— Տէ՛ մկայ իմ մարդը չէր, չկանէր սըպանէր, մկայ իմ մարդն ա, դու կանձա ըդու սըպանէ. հա՛, վիզդ կը քաշեմ:

— Աղջի՛, էդի որ յիմցաւ՝ էդ աղջիկները կուզայ, ես ո՛ւստ տամ Բարակ շախը յիմցաւ, ասաց.

— Լեկթեմուր, չեմ գիտում, էդ աղջիկները քեզնից կուզեմ, բե-
րի՛ր՝ բերի՛ր, չբերի՛ր՝ վիզդ կը զանեմ:

Յորդում կերաւ Լեկթեմուր, ասաց.

— Բարակ շախ, Աստուած վկայ, չեմ կանայ բերէ. էդ աղջիկ-
ները եօթ տարի ընձի ճրագկալ էն չիքէ. ընձի գլխիվեր կապում ին
սանը, ճրագ դնում ին ոտներիս վրէն, տակը կար անում ին:

Բարակ շախը ասաց.— Մի՛ վախենայ, ես էլ քու խեղճը կըզամ:
Ձիւնքը քաշեցին, խեծան, գնացին մեծի ափը:

Էդ մեծի ափը աղջիկները միջսան ունէն, ընդոց միջսանը ըն-
տի էր:

Բարակ շախ ասաց.— Լեկթեմուր, ըդոնց սոխորութեն իմալ ա:

— Արեւ մտաւ, պտի կրակ անես, որ սապախսան (առաւօտ)
գան ընդոնք կռիւ:

Բարակ շախ ինք մեծի մէջ գնաց ուրիշ տեղ. Լեկթեմուր բօլ
ցախ ժողկեց, կողոնեց (կուտեց), կպցրեց (վառեց):

Աղջիկները էլան իրանց օթախի տանիքը. տեսան որ միջսան
կրակ էն արեր. ճանչցան, որ Լեկթեմուրի կրակն ա:

Առաւտուն էլան, գնացին Լեկթեմուրի տեղ, ալպեալ (անմի-
ջապէս) վէր դրին. առան Լեկթեմուրին, տարան իրանց տունը, գը-
լօխ դրին գետինը, ոտներ ելըվըրին, փաթեցին սանը, ճրագ դրին
կռնկների վրէն. ձէթ էկաւ ըդու քթի ծէրից կաթաց:

Բարակ շախը էկաւ, մտաւ միջսան:

Ձոջ աղջիկը պզտուկին ասաց.— Ելի՛ր տանիսը, տես, մեր մի-
ջսանը կռիւ անող չկայ:

Ելաւ տանիս, իշկեց որ մէ լաւ կրակ անող էկեր, կրակ արէ՛
Գնաց ասաց.—Քուրիկ, ես էս կրակ անողից շատ եմ վա-
խենում:

—Յընչի՞ վախում ես, քուրիկ:

—Կուղեմ, դուն էլ էլի տես:

Երկսով էլ էլան, տեսան. Երկսով էլ վախեցան, ասեցին.

—Էս կրակ անողից մեզի խաբա (վտանգ) կը դայ:

Առաւտուն լուսը բացուաւ. աղջիկները սովորեր ին, Երկսով էլ
յիւրան դացին կուր, որ Բարակ շախին էլ Լեկթեմուրի պէս վերը-
ցեն, բերեն:

Շատ կուր Երեցին, Երկսով էլ չկարցան:

Բարակ շախ մէկ ձեռ թալեց մէկ աղջկայ ծամբը բռնեց, մէկ
ձեռն էլ թալեց, մէկկել ծամբը բռնեց, քաշեց:

Աղջիկները յորդում կերան թէ՛ «ո՛վ որ մեզի յաղթայ՝ ընդու
պտի առնենք, միայ դու յաղթեցիր, մենք Երկսով էլ քոնն ենք»:

Բարակ շախ ծամբը թողեց, դնացին աղջիկների տունը. տե-
սան, որ ձէթ էկեր Լեկթեմուրի քթից կը կաթայ:

Ասաց Բարակ շախ.

—«Լեկթեմու՛ր, Լեկթեմու՛ր,

իմա՛լ եղեր իս, քա՛հ-թեմուր»:

Թուրը քաշեց, ըդու շքեքներ կտրեց, պրծըցրեց, ասաց.

—Լեկթեմու՛ր, դնա՛ քու Երեսը լուայ:

Գնաց, լուաց, էկաւ-նստաւ:

—Դարի՛, ասաց Բարակ շախ.—Էս աղջիկները կիսա, մէկը
քեզի, մէկն էլ ընձի:

Պզտիկը շատ սիրուն էր:

Լեկթեմուր ասաց իրան-իրան.—«Թէ՛ էնի առնեմ՝ արի՛ տես,
Բարակ շախ ընձի սըպանայ. թէ՛ ասեմ՝ ջոջն ընձի, ջոջը պզտեկից
գէշ ա. ասաց.

—Բարակ շախ, ես ջոջ եմ, ջոջը ընձի՛ պզտիկը քեզի:

Բարակ շախ ասաց.—Որ յըմալ ա՛ արի՛, էս Երկու քուրը որ
առանք, ընձի աղջիկ էլաւ՝ քեզի տղայ,—ես տամ քու տղին. քեզնից
աղջիկ էլաւ՝ ընձնից տղայ,—դու տաա իմ տղին:

Էդմալ բերքեարքմա *) արեցին, վերցին-դացին:

Տարին քմաւ, Լեկթեմուրին աղջիկ էլաւ, անունը դրին Բահր

*) Դեռ չծնած, կամ երբ օրօրացի մէջ տղայ եւ աղջիկ է, կը խոստանան իրար
տալ: Բ է ք ք ք ք ք ք ք ք ք ք կը նշանակէ—օրօրաց գծի:

(ծով). Բարակ շախին տղայ էլաւ, անունը դրին Շիրին շախ (քաղցր թաղաւոր):

Լեկթեմուր Բահրի դօնտախ (խանձարուր) առաւ, դնաց ծովին ասիւր, կայնաւ, ասաց ծովին.

— «Բահրը, տար իմ դահրը (ցաւ, հառաչանք).

«Բարակ շախ ընձի յաղթեց—էսի մէկ դարս.

«Իմ աղջիկ առաւ,—էսի էրկու դարս.

«Աղջըկների սիրունը առաւ,—էսի իրեք դարս.

«Իմ աղջիկն էլ տուեց իրա աղին,—էսի չորս դարս:

«Բահրը թալենք, թող դահրը տանի»:

Բահրը թալեց, դահրը տարաւ Փաջանց երկիրը:

Մնաց Շիրին շախ, որ օր բը դօր ջոջըցաւ, էլաւ տասներկինդ տարեկան տղայ:

Մէ օր մէրը ասաց.—Շիրին շախ ջա'ն, դու յընչի'ն չես էթըմ Բահրը բերի:

—Նանէ, որ տեղն ա, ասաց Շիրին շախ:

—Տէ՛ Փաջանց երկիրն ա:

Շիրին շախ էլաւ, յալխանը ձեռը առաւ, թուրը մէջքը կախեց, խեծաւ ձին ու գնաց:

Շատ ու քիչ Աստուած գիտայ, գնաց ընկաւ մէ երկիր, տեսաւ, որ էրկու դէվ կուլըմ են, մէկը սիպտակ, էն մէկելը սև. Սևը՝ որ դանըմ էր սիպտակին՝ սիպտակը բլլըմ էր մէ մազի բաքաւ ու չէր կտրւըմ. սիպտակը որ դանըմ էր սևին՝ ըսիկ չէր էրեւըմ վրէն:

Շիրին շախ ասաց.—Աստուած վկայ, ես էս սևին մէ թուր պտի գանեմ, յինք ու ուր քալան (բաղդ):

Թռաւ, սև դէվին մէ թուր դանեց:

Դէվն էլաւ էրկու կտոր, մէկ բանձրցաւ վերեւ, մէկ մնաց ցածը:

Սիպտակ դէվը Շիրին շախի թևից բռնեց, թալեց էն գեն:

Դէվի էն վերեւի կտորը էկաւ, զարկեց էն մէկել կտորին:

Շիրին շախ ասաց սիպտակ դէվին.

—Նս քեզի լաութեն արեցի, դո՛ւ իմ թևիցս բռնեցիր, թալեցիր:

—Ղուրբան քեզի, ասաց սիպտակ դէվը, ես քեզի լաութեն եմ արեւ, էն վերեւի կտորը սեհրբազ էր, քեզի կը դանէր, կը սըպանէր:

—Դու ինչ ես գինըմ, ես Շիրին շախն եմ:

—Նս գինըմ եմ, դու էթըմ ես Բահրի էտա. ես էլ Փաջանց թագաւորի գղինն եմ, քու լաութեն չեմ կորցու. քու Բահրն էլ իմ քուրն ա, կը տանեմ, իմ քուր կըտամ քեզի:

Սխալտակ գէշը ընկաւ առէջ, առաւ Շիրին շախ դնաց:

Քաջանց երկիրը ընկան. իրիկնեց ո՛ր քաղաքը որ իջնում ին, սխալտակ գէշը աներեւութք ըլլում էր, առաւտուն գալում, առնում, էթում էր Շիրին շախին:

Գացին-գացին մէ տահարի (քաղաք) բուստ էկան:

Էդ տահարի մէջ մէ մարդ կէր, անունը Քաջ-Վարդանն էր. էդի յրման քաջ էր, որ մարդ չէր կանւում յաղթի. վախենում ին իրանից՝ ըդու խամար արեւը էին իրանց քաղաքին նախըջի. ըդու հախն էլ՝ յիրկնէ յիրկունն ո՛ր տաւարը որ ածքը կտրէր՝ չորս ոտքը կը կապէր, կէցգէր փէտի դօխ, կը դնէր թևի վրէն, կը բերէր, յիրիկնէ իրիկուն կուտէր:

Շիրին շախին դօնախ տուին էս Քաջ-Վարդանի տունը, որ ուտայ ընդու:

Շիրին շախ տեսաւ՝ Քաջ-Վարդանի կնիկ շատ սիրուն ա:

Կնիկ ասաց ուրին-ուրին.— Յիրկուն կըդայ Քաջ-Վարդան, էս խողածին կը սըպանի. փաթըտեց խաիլ, դրեց դռան էտա:

Յիրկուն տեսաւ, որ Քաջ-Վարդան մէկ չէկ կուտընի (կուտուած գոմէշ) չորս ոտք կապեր, թալեր ա մէ փէտի դօխ, դրեր թևի վրէն ու կռկռալով, կոտչներ պատեր ու դռներ սրբելով՝ էկաւ. որ գոմչին տփեց գետին, փորը ճղուաւ, պլոճիկներ թռաւ, դնաց-ընկաւ դռան ետա:

Քաջ-Վարդան զօռեց իրա կնկան, ասաց.

— Էլի, թունդիբ վառի:

Բերեց ջոջ դազան դրեց թունդըայ վրէն, ճխտեց չէկ կուտընի վիզը կոտրեց, ծախեց. չօք դրեց գոմչի փորի վրէն, ճղրտեց, դրեց դազնի մէջ:

Ղազան սկսեց էփիլը:

Քաջ-Վարդան գախ քաշում մէկ ճուղը ուտում էր, գախ թևը, գախ քաշում, կոտչները խանում էր:

Մէ օհհրբազ պառաւ կէր էդ քաղաքին մէջ. ասաց.— Էթամ, տենամ, Քաջ-Վարդան Շիրին շախին էլ կերե՛ր ա՝ թէ մնում ա:

Էկաւ-տեսաւ, որ մնում ա, ասաց.

— Քաջ-Վարդան, Շիրին շախը իդա դռան էտա խսըլի մէջ դրուկ ա:

Շիրին շախ խսըլից էլաւ դուս, խասաւ Քաջ-Վարդանին:

Քաջ-Վարդան տեսաւ, որ էսի խողածին ա, ինքն էլ խասաւ ընու:

Շիրին շախ Քաջ-Վարդանին վերցրեց, զանեց գետին, ձեռը էցդեց սունը, բանձրեց ու Քաջ-Վարդանի քանփուլը (գլխակ, խոպոպ) դրեց սան տակը:

Շիրին շախ ասաց Քաջ-Վարդանի կնկան.

— Անօթի եմ, խաց բեր, ուտեմ:

Խացն առաւ-էկաւ, նստաւ-լերաւ:

Տեղ էցդեցին ու քնան:

Լուսը բացուաւ, Շիրին շախ էլաւ, ընկաւ ճամբախ, գնաց:

Սիպտակ դէվը էկաւ Շիրին շախի առէջ, ասաց.

— Ի՞մալ պրծար-էկար Քաջ-Վարդանի ձեռիցը:

— Պրծայ:

— Էսօր արի էթանք քո Բահրի կուշտ, — ասաց դէվը:

Առաւ-գնաց իրանց տուն:

Սիպտակ դէվի քուր անունն էլ Բահր էր:

Դէվը ասաց. — Շիրին շախ, էդ Բահրն, էդ էլ դու:

Շիրին շախ իշկեց, որ էդ աղջիկ մէկ ապրոյշն մէկն ա:

— Թէ որ էսի ա, ասաց, մէ բան չէ:

Առաւտուն էլաւ, իր ձինը քաշեց, բերեց դուռը կապեց. էկաւ որ թամբն էլ տանէր՝ էկաւ տեսաւ, որ էդ ապրոյշ աղջիկ ձինը գողացեր ա:

Գնաց, ձին գտաւ-բերաւ, տեսաւ որ թամբը գողացեր ա:

Շիրին շախ տեսաւ, որ չէնի՝ ձին քաշեց ներս, թամբը գտաւ, դարկեց ձիու վրայ, ղօլանք ամրացրեց, էկաւ չէմի վրէն կայնաւ (ձին թամբով չընցնիր), ձեռ տուեց, չէմ ու չէմկալ, վերցրեց, առաւ, էլաւ դուռ:

Սիպտակ դէվը էկաւ առէջը, աղջիկը թասաց աղբօր:

— Իմ մօր ծծի կաթը քեզի խառամ բլի, թէ որ իրեք խեռ իրան բերնովը, իր մեռնելը ուզել չտաս Շիրին շախին:

Ընկան ճանբախ, գնացին, մէ ծովի ըռաս էկան:

Գնացին ծովի ափը, գլխի բերեց իրան ձիան չորս ոտքն էլ դեղեց, Շիրին շախի ձիան իրեք ոտքը դեղեց:

Ձիանք տուին ծովի մէջն ու գացին:

Շիրին շախի ձիան մէկ ոտքը դեղուկ չէր, խրթվում էր ծովի մէջ, ու քօփլում. աղէն էնդար ձիան վրէն արողուաւ, մէ խեռ իրան մեռնելը ուզեց:

Ելի ձին խրթվելով քօփլելով՝ արողեց իրան. դարձաւ, տեսաւ՝ որ թուրը ընկեր ա վրիցը, մէկ խեռ էլ էս տեղ իրան մեռնելը ուզեց, ասաց:

— Աստուած, խոզիս առնէիր, թուրը չընկնէր ծովի մէջ. ես էս թրով Բահրը պտի խանի Քաջանց տնէն:

Մէ խեռ էլ իրան մեռնելը ուզեց:

Եւ ծովիցը էլաւ, ձին ընկաւ, սատկաւ, ասաց:

—Աստուանծ, խոզիս առնէիր, ձիս չստուկէր. ես էս ձիով պտի
Բահրը խանի Քաջանց տնից:

Կատարուաւ սիպտակ դէմի քւոր ուղածը:

Շիրին շախ նստաւ ձիան կողքի խետ լայլմ էր. տեսաւ՝ որ էն
ծակից էրկու մուկ էկան, ձիան ականջ կրծմ ին, յինք փէտ վեր-
ցրեց, զարկեց:

Մէկ մուկը սատկաւ:

Էն մէկել մուկը գնաց, ընդոցմէ ընդեն ծաղիկ կէր, ջուր կէր.
ծաղիկը քաղեց-բերեց, Թաթխեց աղբրի ջրի մէջ, բերեց, տուեց մը-
կան քթին:

Սատկած մուկը սաղցաւ, էլաւ, մտաւ ծակը:

Էլաւ, ինքն էլ էն ծաղիկից քաղեց, բերեց, Թաթխեց էն ջրին
մէջ, տուեց ձիան քթին, ձին էլաւ, սաղցաւ:

Էդ դարձաւ իշկեց, որ ձուկը՝ Թուրը բերանը առեր, բերեր ա
ափը:

Թուրը գանեց տեղը, մէ խետ էլ տեսաւ, որ Քաջանց գզիրը
էն հանից էկաւ, ասաց.

—Խողածին, ըստուց դեն էլ ընձի բան չունեմ, Քաջանց եր-
կիր ա, սեհրպազ աշխարհ ա, դու գնա:

—Ըպա ես իմալ անեմ:

—Քաջանց Թազաւորին ուխտադրութեն ունեն, էդ սիպտակ
օտարի վրէն մէ ծառ կայ, էն ծառից խրատ ան:

Շիրին շախ էլաւ, գնաց ծառի կուշտը:

Գլօխ տուեց ծառին, ասաց.—

Ծառ կանաչես, ծառ կանաչես,

Ընձի մէ բարի խրատ ասես.

Էթամ Բահրին խասնեմ,

Քաջանց սնից բերեմ:

Ծառը ասաց.—

Ա՛յ խողածին, ա՛յ խողածին,

Կեթաս, կայնիս Փրէքաթման կաւմնջին.

Խամբարձման երկուսաբքին

Կը տեսնես քո Բահրին:

Շիրին շախ Խամբարձման գիշերը գնաց, պարկաւ Փրէքաթման
կարմունջի վրէն. Բահրը էկաւ, քառսուռն դարալիս Քաջանց աղջիկ-
ներէցը խեղը:

Քաջանց աղջիկները էկան, տեսան որ, օհ, Շիրին շախ ըս-

տեղն ա. ընցնողը թմրութեն թափեց վրէն, ընցնողը թմրութեն թափեց վրէն. մնաց քնուկ:

Բահրն էկաւ-տեսաւ, օհօ, քնուկ ա. կզաւ, էրեսները պաշեց, չիմցաւ. ականջին բռնաց, չիմցաւ. տեսաւ՝ որ օգուտ չունի, չիմնում ա. իրեք ճան էցդեց ջեպ, թողեց, դնաց:

Քաջանց աղջիկների խեղճ գնացին Մաղիկ լեռը, ծաղիկ քաղեցին, դարձան. տեսան, որ էլի քնուկ ա:

Շիրին շախ զարթեց, որ աղջիկները Մաղիկ սարից էկեր, ընցեր են. ձեռ տուեց ջեպ՝ որ իրեք ճան կայ ջեպ. իմցաւ, թէ ինչ բախաւ:

Իրեք խեղճ Քաջանց աղջիկները խեղճ ընցաւ Բահրը Փրէքաթ-մանի կարմունջից, իրեք խեղճ էլ թմրութեն թափեցին վրէն:

Բահրը ինչ արաց, չկարաց զարթնացնել, ճան թալեց ջեպ, ընցաւ Խամբարձման գիշերը:

Էն յետի գախին ասաց.—Օհօ, Բահրը ընձի ձըժու տեղ դրեր, ճան թալեր ա ջեպս. իմ բան ընցաւ, էս իրեք տարի ա՝ չեմ կարամ իմ Բահրը տեսնամ, էթամ թըխ իմ ծառը, տեսնամ, ինչ բարի խրատ կըտայ ընձի:

Շիրին շախ վիզը օղրած՝ գնաց թըխ էն ծառը:

—Մառ կանանչես, ծառ կանանչես,

Ընձի մէ բարի խրատ տեսն.

Էթամ, իմ Բահրին խաւնեմ,

Քաջանց ցնից խաւնեմ, բերեմ:

—Խոզածին, ասաց ծառը, գիր գինձա:

—Ի՛մալ չգինամ, գինամ, ասաց Շիրին շախ:

—Էդ ծաղկներից ու խոտերից իմ կուշտ կան, քաղա՛, դասա-դասա կապա՛, իմ կուշտ բեր:

Շիրին շախ ման էկաւ, ինչքան ծաղիկ ու խոտ կէր, քաղեց, կապեց. բերեց, կոլունեց ծառի ֆօքը:

Մառն ընդու ասաց.—Դէ՛, քո դալամ քո ձեռ առ, ես էս ծաղկների, խոտերի անունը ասեմ, դու էլ գրա՛, որ ըլլես հեքիմ, բալֆի հեքիմութենով Բահրը Քաջանց տնից խանես:

Գրեց, իմցաւ, ծաղկները, խոտերը վերցրեց:

Մառը Շիրին շախի անունը փոխեց, Ոչինչ դրեց, ասաց.

—Ո՛չինչ, կեթաս Քաջանց թագաւորի ու ընդու մարդիկների դուռը, էն տեղ սեհր ա. ինչ տեսնաս, բարև պտի տաս, ինչ բանի ըռաս իգաս՝ առանց բարև տալու չընցնես, որ ընցար, քու բան

գէշ կեղնի. փէտ, ցախ, աւել, շու՛ն, լակաման, մարդ, ճիժ, կնիկ
բարեւ տու, ընցի՛, որ չի՛նասուես:

Շիրին չախ էլաւ, գնաց Քաջանց քաղքին մէջ ինչ խիւանդ
մարդ իրան ուրթաւ (սլատահաւ), սաղցրեց. *font*, բովալ, խուլ,
հաւալի, գոթեցուկ (ծիւրական ախտ), յըմէնն էլ սաղցրեց:

Քաջանց թագաւորի տղայ Սե-Դուլտուլը տասներկինգ տարի ա
գոթեցեր էր, իրա խօր ասաց.

— Հեքիմ ա էկեր, խանչա՛, թըղ ընձի սաղցընի:

Թագաւորը բերեց հեքիմ Ոչնչին, ասաց.

— Իմ տղէն կարսա՛ սաղցընես, ա՛յ խողածին, որ քու լիզուն
ինչ պըտըտայ, էն էլ կըտամ:

— Թագաւոր ասրած, որ յըմալ ա, ես կը սաղցընեմ:

Քաջանց թագաւորը Ոչնչի հեքիմին առաւ, գնաց իրա տղի
կուշտը:

Ոչնչն էր, դեղ տուեց, Սե-Դուլտուլը իրեք օրում սաղցըրեց,
էլաւ վեր:

Սե-Դուլտուլ ասաց. — Էս տասներկինգ տարի ա հոլ չեմ խաղցի,
հոլ տուէք, խաղամ:

Սե-Դուլտուլ գնաց տղեկներին խետ հոլ կը խաղէր:

Թագաւորը ասաց Ոչնչին. — Խո՛ղածին, դը՛ ուզա՛:

— Կըտաս ընձի բօզ ձին-աթակին, թուրն-կէծակին:

Թագաւորը ասաց. — Ա՛յ, քեզի էդ հըն որ սովորեցրեց, բերանը
չորեէր. Սե-Դուլտուլ մեռնէր, դու բօզ ձին չուզէր, հմա իղար
(խոստմունք) եմ արե, դօնմանամ (յետ չեմ դառնար):

Տուեց թուրն ու ձին:

Թագաւորը գնաց Սե-Դուլտուլի կուշտ՝ քառաւառ անելու:

Ոչնչ խեծաւ բօզ ձին-աթակին, կապեց թուր-կէծակին, առաւ
Բահրը իրան քարկ ու փախցրեց:

Հեքիմ Ոչնչի եր նոր էկեր էր թագաւորի դուռը, աչքը առեր
չէր շան լակամանին, բարեւ չըր տուեր:

Շան լակամանը տփուաւ գետին, էլաւ էրկինք, խանչեց, ասաց.

— Սե-Դուլտուլ, Բահրը տարան Քաջանց տնից:

— Ո՛րը տարաւ:

— Ոչնչը տարաւ:

— Է՛հ, ոչնչ, հօ ոչնչ, հոը դրէք, ես զանեմ:

Շան լակաման էլի տփուաւ գետին, բանձըցաւ էրկինք ու ձէն
տուեց:

— Սե-Դուլտուլ, Սե-Դուլտուլ, Բահրը տարան Քաջանց տնից:

—Ո՞րը տարաւ:

—Ոչինչ:

—Ոչինչ, հօ ոչինչ, հոլը դրէք, ես գանեմ:

Շան լակամանը էլի տփուաւ դետին, բանձրցաւ էրկինք, խանչեց:

—Սե-Դուլտուլ, Սե-Դուլտուլ, Սե-Դուլտուլ, տարան, հա տարան Բահրը Բաջանց տնից:

—Ո՞րը:

—Հեֆիմ Ոչինչ:

Խեա գախուն, որ ասաց «Հեֆիմ-Ոչինչ», Սե-Դուլտուլ հոլը թողեց, էկաւ մտաւ քաւկեն, ձին քաշեց դուռ, խեծաւ, ընկաւ Շիրին Շախին . . . ալբիալ բռնեց իր խողի մէջը:

Քաջանց գզիր էկաւ առէջ Շիրին շախին, ասաց:

—Տո՛ւր աղջիկ խօրը պախ, դարձի՛ քո դուռնի վրէն:

—Չէ՛, ասաց, խարիր աղջիկ, խէր կըտայ մարդի:

—Քո՛ւր տուր աղբօր պախ, դարձի՛ քո դուռնի վրէն:

—Չէ՛, ասաց, խարիր քուր՝ աղբէր կուտայ մարդի:

—Սանամէր տուր քաւորին պախ, դարձի՛ քո դուռնի վրէն:

կուլ:

Էն սնաթը տուեց, դարձաւ Սե-Դուլտուլի վրէն, որ կուռին:

Էն գանեց ըսու, էս գանեց ընու, ընենց որ, սար ու ձոր ըզոնց առաջները դողմ էր:

Սե-Դուլտուլ ասաց.—Շիրին ջան, ընչի՛ իրարու սըպանինք, էթանք աղջկայ կուշտ, վի՛ր որ ուզում աս, էնի թըղ առնի:

Գնացին աղջկայ կուշտ, խարցրին:

Աղջիկը ասաց.—Սե-Դուլտուլ, քեզի տենում եմ՝ աչքերս ա ֆօնըմ, Շիրին շախին էլ որ տենում եմ՝ թեքերս ա թուլնըմ:

Էս որ լսեցին, ասեցին.—Կուռնիս, հօ կուլ աս:

Էրկու սնաթ կուռան, իրանց թեքերը թուլցաւ. էլի էկան աղջկայ կուշտ, էլի խարցրին, էլի աղջիկը ասաց:

—Սե-Դուլտուլ, քեզի տենում եմ՝ աչքերս ա ֆօնըմ, Շիրին շախին տենում եմ՝ թեքերս ա թուլնըմ:

Էլի դարձան իրարու վրէն կուլ:

Չուրի յերկուն գանեցին, դարկուան, իրար ջարդեցին, սաղ տեղ չմնաց իրանց վրէն:

Շիրին շախ ասաց.—Սե-Դուլտուլ, էլի էթանք աղջկայ կուշտ:

Էլան գնացին աղջկայ կուշտ, խարցրին:

Աղջիկը ասաց.—Աստըծու իզնով ես Շիրին շախին բուդեմ եմ, ընդհու կը խասնեմ:

Սե-Ռուլտուլ էլաւ աղջկայ ճակատը պաչեց, ասաց.

— Դու իմ ծնող քուրն իս ըսդուց դէն:

Ելան Շիրին շախին, Բահրին խեծըցրին ձիանքը, ընկան ճան-
րախ, տարան, խասցրին Սե սարը—իրան տունը:

Խարսանիք արեցին, Սե-Ռուլտուլ էլաւ խարսնադրէր, սկստակ
դէվը էլաւ քաւոր, եօթը որ, եօթը գիշեր որ քմաւ, քաւորն ու
խարսնադրէր խեծան ձիանքը, դարձան Փաջանց երկիրը:

Էնոնք խասան իրանց մուրազին, դուք էլ խանիք ձեր մու-
րազին:

